ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
22 սեպտեմբերի 2023 թվականի N 358-Ա

ՆԱՐԵ ՂԱԶԱՐՅԱՆԻ, ԿԱՐԵՆ ԲԱԼՅԱՆԻ, ՆՎԱՐԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ ՍՈՒՐԵՆ ՔԵՍԵՋՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Նարե Ղազարյանին, մարզպետի խորհրդականներ Նվարդ Հարությունյանին և Կարեն Բալյանին՝ 4 օրով՝ 2023թ. սեպտեմբերի 23-ից 26-ը և օգնական Սուրեն Քեսեջյանին՝ 2 օրով՝ 2023թ. սեպտեմբերի 23-ից 24-ը գործուղել Գորիս և Տեղ համայնքներ՝ Կոռնիձորում Լեռնային Ղարաբաղից տեղահանվածների առաջնային հաշվառման և կարիքների գնահատման կետի և Գորիսում կոորդինացիոն կենտրոնի ծավալման աշխատանքների համար:
2. Մարզպետի աշխատակազմի սպասարկող անձնակազմի վարորդ Գևորգ Ավագյանին՝ 2 օրով՝ 2023թ. սեպտեմբերի 23-ից 24-ը, ԿԻԱ ՕՊՏԻՄԱ մակնիշի 600 ԼԼ 80 պետհամարանիշի ավտոմեքենայով, ապահովել տրանսպորտային միջոցով սպասարկումը:
3. Ֆինանսական վարչությանը՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 22
ք. Կապան